Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

07.10.2014թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 01.10.2014թ.-ի թիվ 96 կարգադրությունը, <<Խաչիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում անցկացվեց 2012- 2013թ.թ.-ի գործունեության ներքին աուդիտ, ներքին աուդիտի բաժնի բաժնի գլ.մասնագետներ՝ Ն.Կարապետյանի և Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին դպրոցի տնօրեն՝ Ս.Թադևոսյանը և հաշվապահ՝ Օ.Զաքարյանը:

Աուդիտի հիմնական ուղղությունները

ա/ Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

դ/ Ակտիվների գույքագրման, առկայության համապատասխանության ստուգում:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին՝ Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի երկու տարվա աշխատանքային փորձ:

<<Խաչիկի միջնակարգ դպրոց>> Պետական ոչ Առևտրային կազմակերպություն գ.Խաչիկ:

Գործունեության նպատակը՝ աշակերտների հանրակրթական ուսուցում:

2012 թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ ըստ տարիֆիկացիայի՝

-դասարանների թիվը- 11:
-աշակերտների թիվը- 105:
-աշակերտների միջին խտությունը- 9.5:

Տարրական դպրոց 4 դասարան, աշակերտների թիվը 37, միջին խտությունը 9.2:
Միջին դպրոց 4 դասարան, աշակերտների թիվը 35, միջին խտությունը 8.7:
Ավագ դպրոց 3 դասարան, աշակերտների թիվը 33, միջին խտությունը 11:
Աշխատողների թվաքանակը 30, մանկավարժական աշխատողների թվաքանակը 16, մանկավարժական աշխատողների դրույքների թիվը 15.1 վարչական և սպասարկող անձնակազմի թվաքանակը 14, վարչական և սպասարկող անձնակազմի դրույքների թիվը 14:
Ընդամենը դրույքների թիվը 29.1:
Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը՝ 20.7 ժամ կամ 0.94 դրույք :

2013 թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ ըստ տարիֆիկացիայի՝

-դասարանների թիվը- 11:
-աշակերտների թիվը- 105:
-աշակերտների միջին խտությունը- 9.5:

Տարրական դպրոց 4 դասարան, աշակերտների թիվը 41, միջին խտությունը 10.2:
Միջին դպրոց 4 դասարան, աշակերտների թիվը 32, միջին խտությունը 8:
Ավագ դպրոց 3 դասարան, աշակերտների թիվը 32, միջին խտությունը 10.7:
Աշխատողների թվաքանակը 29, մանկավարժական աշխատողների թվաքանակը 16, մանկավարժական աշխատողների դրույքների թիվը 15.2, վարչական և սպասարկող անձնակազմի թվաքանակը 13, վարչական և սպասարկող անձնակազմի դրույքների թիվը 14:
Ընդամենը դրույքների թիվը 29.2: Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը՝ 20.9 ժամ կամ 0.95 դրույք:

2. Ֆինանսատնտեսական բնույթի տեղեկատվություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում

2012թ.

հազ.դրամ

Ցուցանիշներ	Տարրական դպրոց			Միջին դպրոց			Ավագ դպրոց			Ընդամենը
	8 ամիս	4 ամիս	Ընդամենն	8 ամիս	4 ամիս	Ընդամենն	8 ամիս	4 ամիս	Ընդամենն	
1.Աշակերտների թիվը ըստ կոմպլեկտավորման	38	38	X	41	35	X	31	33	X	
2.Աշակերտների թիվը ըստ տարիֆիկացիայի	38	38	X	41	35	X	31	33	X	
3.Աշակերտների թիվը ըստ մատյանների	38	38	X	41	35	X	31	33	X	
4. Մեկ աշակերտի թվով ֆինանսավորման չափը/դրամ/	106290	106290		106290	106290		106290	106290		
5.Ֆինանսավորում փաստացի 1*4/հազ.դրամ/	2178.0	1089.0	3267.0	3106.3	1553.2	4659.5	2614.2	1307.1	3921.4	11847.9
6.Պահպանման ծախսեր/հազ.դրամ/	X	X		X	X		X	X		16708
7.Այլ լրացուցիչ ֆինանսավորում	X	X		X	X		X	X		4731.6
8.Այլ լրացուցիչ պակասեցում	X	X		X	X		X	X		
9.Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		33287.5
Ըստ աուդիտի 3*4	2178.0	1089.0	3267.0	3106.3	1553.2	4659.5	2614.2	1307.1	3921.4	11847.9
6.Պահպանման ծախսեր	X	X		X	X		X	X		16708
Այլ լրացուցիչ ավելացում	X	X		X	X		X	X		4731.6
8.Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		33287.5
Շեղում/ավելի ֆինանս.+,պակաս ֆինանս -/	X	X		X	X		X	X		0.0

Ըստ կոմպլեկտավորման և ըստ աուդիտի տարրական, միջին և ավագ դպրոցների աշակերտների միջին թիվը կազմել է համապատասխանաբար՝ 38, 39 և 32 աշակերտ:

2013թ.

հազ.դրամ

Ցուցանիշներ	Տարրական դպրոց			Միջին դպրոց			Ավագ դպրոց			Ընդամենը
	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	
1.Աշակերտների թիվը ըստ կոմպլեկտավորման	38	41	X	35	32	X	33	32	X	
2.Աշակերտների թիվը ըստ տարիֆիկացիայի	38	41	X	35	32	X	33	32	X	
3.Աշակերտների թիվը ըստ մատյանների	38	41	X	35	32	X	33	32	X	
4. Մեկ աշակերտի թվով ֆինանսավորման չափը/դրամ/	111235	111235		111235	111235		111235	111235		
5.Ֆինանսավորում փաստացի 1*4/հազ.դրամ/	2378.9	1189.5	3568.4	2882.9	1441.4	4324.34	2898.7	1449.3	4348.0	12240.7
6.Պահպանման ծախսեր/հազ.դրամ/	X	X		X	X		X	X		16876
7.Այլ լրացուցիչ ֆինանսավորում	X	X		X	X		X	X		5956.3
8.Այլ լրացուցիչ պակասեցում	X	X		X	X		X	X		
9.Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		35073.0
Ըստ աուդիտի 3*4	2378.9	1189.5	3568.4	2882.9	1441.4	4324.34	2898.7	1449.3	4348.0	12240.7
6.Պահպանման ծախսեր	X	X		X	X		X	X		16876
Այլ լրացուցիչ ավելացում	X	X		X	X		X	X		5956.3
8.Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		35073.0
Շեղում/ավելի ֆինանս.+,պակաս ֆինանս -/	X	X		X	X		X	X		0.0

Ըստ կոմպլեկտավորման և ըստ աուդիտի տարրական, միջին և ավագ դպրոցների աշակերտների միջին թիվը կազմել է համապատասխանաբար՝ 39, 34 և 33 աշակերտ:

Կազմակերպությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել ՈՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ստանդարտը: Հաշիվների մնացորդների և գործառնությունների դասերի կտրվածքով ապրանքա-նյութական արժեքների հնարավոր կորստի ու յուրացման վրա: Ներքին վերահսկողությանը բնորոշ սահմանափակումների կտրվածքով՝ ներքին վերահսկողության համակարգում խաբեության առկայության հնարավորությունը կազմակերպության ղեկավարության անդամների կամ աշխատողների կազմակերպության ներսում կամ այլ կողմերի միջև գաղտնի համաձայնության գալու հնարավոր լինելու վրա:

Հաշվապահական հաշվառման համակարգի վերաբերյալ բավարար պատկերացում կազմելու, ճանաչելու համար ուշադրություն է դարձվել հաշվապահական հաշվառման գրանցումների, ֆինանսական հաշվետվությունների, հաշիվների և օժանդակող փաստաթղթերի արժանահավատությանը: Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ կազմակերպության հաշվապահական հաշվառումը բավարար է գործել, ներքին վերահսկողության համակարգը՝ նույնպես բավարար:

<< պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2012թ.

հազ.դրամ

Անվանումը	Նախատես-ված	Ֆինանս.	Դրամարկ. ծախս ըստ հաշվետ.	Դրամարկ. ծախս ըստ աուդիտի	Փաստ. ծախս ըստ հաշվետվ.	Փաստ. ծախս ըստ աուդիտի	Շեղում
Ընդամենը ֆինանսավորում	36502	36502	36143.4	36143.4	35617.5	35618.5	-883.5
Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված	36112.2	33287.5	36143.4	36143.4	35617.5	35618.5	-493.7
Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ	28338.1		28540.3	28540.3	28540.3	28540.3	202.2
Պարտադիր սոց. ապահով. վճարներ	5607.3		5574	5574	5430.3	5430.3	-177
Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից	2166.8		2029.1	2029.1	1646.9	1647.9	-518.9
Գրասենյակային նյութեր և հագուստ	813.5		767.7	697.7	767.7	697.7	-115.8
Կենցաղ և հանրային սննդի նյութեր							0
Հատուկ նպատ.նյութեր							0
Այլ ծախսեր							0
Գործառնական և բանկ.ծառ.ծախսեր	20.3		20.2	20.2	20.2	20.2	-0.1
Ներքին գործուղումներ	70		71.4	71.4	71.4	71.4	1.4
Կապի ծառայության վճարներ	29		18.8	18.8	18.8	18.8	-10.2
Կոմունալ ծառայությունների վճար	1234		1151	1221	768.8	839.8	-394.2
էլ. էներգիայի ծախսեր	1234		1151	1221	768.8	839.8	-394.2
Վառելիքի և ջեռուցում ծախսեր							0
Ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար.							0
Նպաստ							0
Ընդհանուր բնույթի այլ ծառայ.							0
Բանկի տոկոս							0
Տարեսկզբի դրամ.միջոցների ազատ մնաց.	11.5	11.5					0
Այլ ծրագրեր		2824.7					0
Այլ (նախակրթարան)*	378.3	378.3					

* Նախադպրոցական կրթության ծառայությունների կազմակերպման ծրագրով ֆինանսավորումն՝ 378.3 հազ.դրամ: Երեխաների միջին տարեկան թվաքանակը՝ 8:

ՀՀ պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2013թ.

հազ.դրամ

Անվանումը	Նախատես-ված	Ֆինանս.	Դրամարկ. ծախս ըստ հաշվետ.	Դրամարկ. ծախս ըստ աուդիտի	Փաստ. ծախս ըստ հաշվետվ.	Փաստ. ծախս ըստ աուդիտի	Շեղում
Ընդամենը ֆինանսավորում	36698.7	36698.7	36696.4	36696.3	37648.6	37744.5	1045.8
Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված	35073	35073	36696.4	36696.3	37648.6	37744.5	2671.5
Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ	34459.2		35560.9	35560.9	36231.1	36231.1	1771.9
Պարտադիր սոց. ապահով. վճարներ							0
Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից	613.8		1135.5	1135.4	1417.5	1513.4	899.6
Գրասենյակային նյութեր և հագուստ	94.3		84.4	84.4	84.4	84.4	-9.9
Կենցաղ և հանրային սննդի նյութեր							0
Հատուկ նպատ.նյութեր	39		158	158	158	158	119
Այլ ծախսեր (տեղեկատվական)	47.8		77.7	77.7	77.7	77.7	29.9
Գործառնական և բանկ.ծառ.ծախսեր	17.5		16.4	16.4	16.4	16.4	-1.1
Ներքին գործուղումներ	70		29.1	29.1	70	70	0
Կապի ծառայության վճարներ	73.4		65.8	65.8	73.4	73.4	0
Կոմունալ ծառայությունների վճար	221.8		654.1	654	887.6	983.5	761.7
էլ. էներգիայի ծախսեր	221.8		654.1	654	887.6	983.5	761.7
Վառելիքի և ջեռուցում ծախսեր							0
Ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար.							0
Նպաստ							0
Ընդհանուր բնույթի այլ ծառայ.	50		50	50	50	50	0
Բանկի տոկոս							0
Տարեսկզբի դրամ.միջոցների ազատ մնաց.*	358.6	358.6					0
Այլ ծրագրեր	179.7	179.7					0
Այլ (նախակրթարան) **	1087.4	1087.4					

* Հիմնական դպրոցի՝ 333.3 հազ. դրամ և նախադպրոցական կրթության ծառայությունների կազմակերպման ծրագրով՝ 25.3 հազ. դրամ: Հանրագումարն է՝ 358.6 հազ. դրամ:

** Նախադպրոցական կրթության ծառայությունների կազմակերպման ծրագրով՝ 1087.4 հազ.դրամ և դրամաշնորհներից՝ 179.7 հազ.դրամ: Երեխաների միջին տարեկան թվաքանակը՝ 11:

Դեբիտորների և Կրեդիտորների հաշվառման աղյուսակ

հազ.դրամ

	Աշխատավարձ և դրան հավ. այլ վճար.		Սոց. ապահ. վճարներ		Կապի ծառայութ.		էլ էներգ. ծախսեր.		Գազ		Այլ Դեբիտ. և Կրեդիտ. պարտքեր		Ընդամենը	
	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K
Մն.01.01.12թ.				194.6				287.4					0.0	482.0
Շրջանառություն 2012թ.	28540.3	28540.3	5574.0	5430.3	18.8	18.8	1221.0	839.8			789.3	789.3	36143.4	35618.5
Մն.01.01.13թ.				50.9			93.8						93.8	50.9
Շրջանառություն 2013թ.	35560.9	36231.1			65.8	73.4	654.0	983.5			415.6	456.5	36696.3	37744.5
Մն.01.01.14թ.		670.2				7.6		235.7				40.9	0.0	954.4

Հաշվետվությունում առ 01.01.14թ. դրությամբ ճշտված տվյալներով կրեդիտորական պարտքերը կազմել են՝ 954.4 հազ.դրամ – աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ՝ 670.2 հազ.դրամ, կապի ծառայություն՝ 7.6 հազ.դրամ, էլ.էներգիա՝ 235.7 հազ.դրամ և ներքին գործուղումներ՝ 40.9 հազ.դրամ:

Հաշվապահական հաշվեկշիռ Ձև N 1
առ. 01.01.2013թ. - առ 01.01.2014թ..

հազ.դրամ

Ակտիվ	Տարեվերջի դրությամբ ըստ հաշվետվության	Տարեվերջի դրությամբ ըստ աուդիտի	Շեղում
Ոչ ընթացիկ ակտիվներ որից	161775.1	161775.1	0
հիմնական միջոցներ			0
մն.արժ.	161775.1	161775.1	0
արժեքը	161775.1	161775.1	0
մաշվածություն			0
Ընթացիկ ակտիվներ որից	4980.1	4028	-952.1
Նյութեր	4025.6	4025.6	0
փոքրարժեք և արագամաշ առարկաներ			0
մն.արժ.	0	0	0
արժեքը			0
մաշվածություն			0
կարճաժամ. դեբիտ.պարտքեր	952.2	0	-952.2
որից հաշ. տրված կանխ.վճ.գծ.			0
հաշվ. գնորդ. և պատ. հետ			0
Հաշվ.սոց.ապահ. և ապահովության գծով			0
Հաշվարկներ անձնակազմի նետ			0
Հաշվարկներ անձնակազմի նետ նյութական վնասի հատուցման գծով			0
հաշվարկներ բյուջեի հետ	670.2		-670.2
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
հաշվ տարբ. դեբիտ. հետ	282		-282
դրամականկան միջոցներ,որից	2.3	2.4	0.1
դրամարկղ			0
հաշվարկային հաշիվ	2.3	2.4	0.1
Հաշվեկշիռ	166755.2	165803.1	-952.1
Պասիվ			0
Սեփական կապիտալ որից՝	165803	164848.7	-954.3
Լրացուցիչ կապիտալ	165803	164848.7	-954.3
Հաշվետու տար.չօգ. զուտ շահ.			0
Նախ. կար. չօգ. զուտ շահ.			0
Եկամ. վերաբ. շնորհ.			0
Կարճ. ժամկ. կրեդ. պարտքեր	952.2	954.4	2.2
այդ թվում			0
հաշվարկ. մատակ.և կապալ. հետ			0
հաշվարկներ բյուջեի հետ	590	590	0
Հաշվ. սոց ապահ. և ապահով. գծ.			0
այդ թվում տույժեր և տուգանքներ			0
Հաշվարկներ անձնակազմի հետ եկամուտների վճարման գծով	80.2	80.2	0
հաշվարկներ տարբ. կրեդիտորների հետ	282	284.2	2.2
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
Կարճ. ժամկ. այլ պասիվներ որից	0	0	0
գալիք ժաման. եկամուտներ			0
Հաշվեկշիռ	166755.2	165803.1	-952.1

Մեր կողմից աուդիտի արդյունքներով կազմվել է հաշվեկշիռ, որը հիմք է տալիս եզրակացնելու՝ հաշվեկշիռը տալիս է կազմակերպության հաշվեկշռի ճշմարիտ և իրական պատկերը:

Դրամական միջոցների հոսքերի մասին
հաշվետվություն
առ. 01.01.2013թ. - առ 01.01.2014

Ձև N 4
հազ.դրամ

Ցուցանիշների անվանումը	Տող	Գումարն ըստ հաշ.	Գումարն ըստ աուդիտի տվյալների	Շեղում
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	010	358.6	358.6	0.0
գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր				
Արտադրանքի աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	35073.0	35073.0	0.0
Ապրանքների իրացումից	030			0.0
Ընթացիկ այլ ակտիվների իրացումից	040			0.0
Ստացված կանխավճարներից	050			0.0
Կարճաժամկետ ֆինանսական ներդրումների դիմաց հաշվարկված եկամուտներից	060			0.0
Գործառնական այլ գործունեությունից	070	1267.1	1267.1	0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	080	36340.1	36340.1	0.0
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր				
Ձեռք բերված արտադրական պաշարների դիմաց	090			0.0
Ապրանքների ձեռք բերման դիմաց	100			0.0
Կատարված աշխատանքների մատուցված ծառայությունների դիմաց	110	1135.4	1135.4	0.0
Տրված կանխավճարներ	120			0.0
Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դիմաց	130	35560.9	35560.9	0.0
Սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով	140			0.0
Առհաշիվ տրված գումարներ	150			0.0
Վճարումներ բյուջե	160			0.0
Գործառնական այլ գործունեության նպատակով	170			0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	180	36696.3	36696.3	0.0
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	190	-356.2	-356.2	0.0
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ		2.4	2.4	0.0

Մեր կողմից դրամական հոսքերի աուդիտ է իրականացվել, որը հիմք է հանդիսանում կազմակերպության կողմից ստացված եկամուտների և կատարված դրամական ծախսերի վերաբերյալ ճշմարիտ կարծիք կազմելու համար:

Վայոց Ձորի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ՝ Ն.Կարապետյանս և Հ.Ավետիսյանս աուդիտի ենթարկեցինք <<Խաչիկի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2012թ.-2013թ.-ի ֆինանսատնտեսական գործունեությունը, առ.01.01.2014թ. դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը և հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվություն է կրում կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Աուդիտն անցկացրեցինք աուդիտի ազգային ստանդարտներին և գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ աուդիտը պլանավորենք և իրականացնենք ֆինանսական հաշվետվությունները և հաշվապահական հաշվառման փաստաթղթավորումը և ձևակերպումները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքները: Մեր կողմից կատարվել է կազմակերպության հաշվապահական հաշվառման ուսումնասիրություն, ֆինանսական և գործառական տեղեկատվության ստուգում, տնտեսական գործունեության նվազագույն ծախսերով իրականացման ուսումնասիրություն, ինչպես նաև օրենքների այլ իրավական ակտերի, կազմակերպության ղեկավարության քաղաքականության, հրահանգների և ներքին այլ պահանջների ուսումնասիրություն: Իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Ընտրանքային կարգով համադրեցինք գույքագրումներով արտացոլված և առկա գույքը: Անհամապատասխանություններ չհայտնաբերեցինք:

Կազմակերպության ակտիվները և պարտավորությունները ճիշտ արժեքով են արտացոլվել հաշվապահական համակարգում և համապատասխանում են գույքագրման տվյալներին:

Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները կազմվել են սահմանված ձևով ֆինանսական հաշվետվությունների հիմունքների պահանջներին համապատասխան: Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը գնահատվել է աուդիտի արդյունքներով, որը արտահայտվել է աուդիտի հաշվետվության մեջ:

2012-2013թ.թ. ուսումնական տարում ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 20.7 ժամ կամ 0.94 դրույք: 2013-2014թ.թ.-ին՝ 20.9 ժամ կամ 0.95 դրույք: ՈՒսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը 2013-2014թ.թ.-ին 2012-2013թ.թ. նկատմամբ աճման տենդենց է կրում:

Արձանագրված թերություններ և խախտումներ:

Նյութական պատասխանատու անձանց հետ լիակատար նյութական պատասխանատվության վերաբերյալ պայմանագրեր չեն կնքվել համաձայն << Աշխատանքային օրենսգրքի 240 հոդվածի:

Կազմակերպությունը 2012թ.-ի ընթացքում ձեռք է բերել 260.0 հազ.դրամ արժողությամբ հիմնական միջոցներ/ հեռուստացույց, երկաթկտրիչ, էլեկտրածակիչ,որը պայմանավորված չէ կազմակերպության հիմնական գործունեության անհրաժեշտությունից/: Կազմակերպությունը առ 01.01.2014թ.-ի դրությամբ կուտակել է 954.4 հազ.դրամի կրեդիտորական պարտք:

Կազմակերպության առ 01.01.2014թ.-ի դրությամբ կրեդիտորական պարտքը հաշվեկշռում և կրեդիտորական պարտքի հաշվետվությամբ կազմում է 952.4 հազ. դրամ, աուդիտի հաշվետվությամբ՝ 954.4 հազ.դրամ, դրամական մնացորդը՝ 2.4 հազ.դրամ: Դրամական մնացորդով ապահովված չէ 952.0 հազ. դրամ կրեդիտորական պարտքը:

<< կառավարության որոշմամբ 2014թ.-ին հատկացվել է 825.2 հազ. դրամ 2013թ.-ին նվազագույն աշխատավարձի բարձրացման ծախսերի փոխհատուցման համար,որի արդյունքում մասնակիորեն հնարավոր կլինի մարելու կուտակված կրեդիտորական պարտքը/954.4 հազ.դրամ կրեդիտորական պարտք - 2.4 հազ.դրամ մնացորդ -825.2հազ.դրամ դրամաշնորհ/: Դրամական միջոցներով չապահովված կրեդիտորական պարտքը կկազմի 126.8 հազ.դրամ:

- 07.11.2012թ.-ին դուրս է գրվել 86 հատ 2969.6 հազ.դրամի արժողությամբ հիմնական միջոց: Խախտվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 02.06.2000թ.-ի թիվ 102 հրամանի պահանջները, այն է նշված գույքը չի ընդգրկվել դուրս գրման ենթակա գույքի ցանկում/3.1.6 կետ/ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 31.10.2007թ.-ի թիվ 787-Ն հրամանի պահանջները, այն է լրիվ մաշված գույքի լուծարման դեպքում հանձնաժողովի կազմում ընդգրկվում է կազմակերպության կառավարումն իրականացնող պետական մարմնից /մարզպետարանից/ մեկ ներկայացուցիչ / հրամանի 6-րդ կետ/:

Համաձայն <<Ներքին աուդիտի մասին >> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի նշված թերությունները վերացնելու համար տրվեց համապատասխան խորհրդատվություն:

Հանձնարարվեց դպրոցի տնօրենին՝

ա/ Կազմել նյութական պատասխանատու անձանց հետ լիակատար նյութական պատասխանատվության վերաբերյալ պայմանագրեր ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 240-րդ հոդվածի պահանջների համաձայն:

բ/ Բյուջետային տարվա դեբիտորական, կրեդիտորական պարտքերի հաշվետվությունը և հաշվեկշիռը կազմել ճիշտ և արժանահավատ:

գ/ Թույլ չտալ ոչ նպատակային ծախսումներ, ապահովելով ֆինանսական միջոցների կառավարման տնտեսող, օգտավետ գործառույթների առկայություն:

դ/ Ակտիվների և պարտավորությունների գույքագրումը կատարել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի թիվ 102 հրամանի պահանջներով: Դուրս գրման ենթակա ապրանքանյութական արժեքները դուրս գրել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի թիվ 787-Ն հրամանի պահանջների համաձայն:

Հանձնարարականների կատարման վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն 1-ամսյա պարբերականությամբ:

Աուդիտորական խմբի ղեկավար՝	Ն. Կարապետյան
Խմբի անդամ՝	Հ. Ավետիսյան
Դպրոցի տնօրեն՝	Ս. Թադևոսյան
Հաշվապահ՝	Օ. Զաքարյան